

ՆՈՐԻՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ

Ասորական աղբիւրներից բերուած երկու այս հաստատոմաներն էլ հաստատում են հայկական այն աւանդութիւնը, ըստ որի Թաղէոս առաքեալը Նդեսիայից յետոյ եկել է Հայաստան և այնտեղ էլ նա հաստատուել է, այնպէս որ հայկական այդ աւանդութիւնը ոչ թէ յետագայում է յորինուած, այլ հաւատացած ենք, որ այն հիմնուած է շատ աւելի վաղ շրջանում գոյութիւն ունեցող պատմութեան վրայ: Երկու այս հաստատմաների առկայութիւնը խօսում է այն մասին, որ հնում եղել է նոյն այս աշխատութեան մի այլ խմբագրութիւնը (շատ հաւանաբար աւելի հին, քան այն, ինչ որ մեզ հասել է): Իսկ երկրորդ տարբերակը, այնինքն Աղդա կամ Թաղէոս առաքեալի միայն Նդեսիայի հետ կապելը և միայն Նդեսիայի առաքեալ զարմանելը տեղի է ունեցել Դ. զարում երբ Նդեսիայի զարդը և Նդեսիայի Եկեղեցին ամբողջ արեւելքի, չափապէս Ասորիքի, Միջագետքի, Հայաստանի ու Պարսկաստանի մշակութային կեանքում նշանակալից դեր էր կատարում և այս երկրներից (ինչպէս նաև Հայաստանից) բաղուած աշակերտներ դնում էին այդ քաղաքը իրենց ուսումը կատարելագործելու համար: Եղեսիայի ձեռք բերած այս հեղինակութիւնը իր կնիքն է դնում և երևան է գալիս մեզ ծանօթ այս խմբագրութիւնը: Ե. զարում կատարուած հայկական հին թարգմանութիւնը միւս՝ այսինքն աւելի հին տարբերակից է կատարուած և դրա հետևողութեամբ էլ հայկական թարգմանութեան մէջ Թաղէոս առաքեալը գալիս է Հայաստան: Ուստի այն ոչ թէ հայ գրիչների կամ թարգմանիչների կեղծիք է, այլ պատմական իրողութիւն, որը հաստատում են նաև ասորական աղբիւրները: Բացի այս վերջինների վկայութիւնից, հայերը ևս ունենցել են իրենց ուրոյն աւանդութիւնը, որը մեզ հասել է Վիկայարաւութիւն Թա-

ղէոսի առաքելոյն, քարոզութեանն և գալստեան ի Հայս, և կատարմանն որ ի Քրիստոսոս յոնուհնով³⁵, Ան յայտնի է նաև Վիկայարաւութիւն որոյն Սանդիսոյ գտներն Սանտրկոյ արքայի³⁶ անունով:

Ինչպէս յետոյ կը տեսնենք, Մովսէս Խորենացին իր Հայոց Պատմութիւնը գրելիս օգտուել է եւ հայկական, եւ ասորական, եւ յունական աղբիւրներից՝ Եւսեբիոս կեսարացու Եկեղեցական Պատմութեան՝ Թաղէոս առաքեալին վերաբերող հաստատոյցի: Սակայն մինչ այդ տեսնենք թէ ո՞վ էր Աղդա կամ Թաղէոս առաքեալը, նա նոյնացուած է Յիսուսի տոնն երկու առաքեալներից մէկի՝ Դեբէոսի հետ, որն, ինչպէս Մատթէոս աւետարանիչն է վկայում, վերանուանուել է Թաղէոս³⁷: Նրան համարել են նաև Յիսուսի եօթնասուն կամ եօթնասուններկու աշակերտներից մէկը: Յամենայն դէպս նա եղել է, ինչպէս աղբիւրներն են հաստատում, Քրիստոսի անմիջական գործակիցներից մէկը, և ոչ մի կասկած չի յարուցում այն որ երկու այս անունների ներքոյ հանդէս է եկել միևնոյն անձնաւորութիւնը: Չնայած նրա մասին եղած տեղեկութիւններում փորձեր են հակասական փաստեր գտնել, բայց ինչպէս պարզել ենք, դրանք ոչ թէ հակասական են, այլ արդիւնք են այն իրողութեան, որ իսկ են երկու տարբեր ակունքներից՝ ասորականից և հայկականից: Տեսանք, որ ասորական Վիկայարաւ վարդապետութեան երկու տարբերակներն են հասել մեզ, որից մէկը եղել է նաև Եւսեբիոսի ձեռքում: Իսկ ինչ վերաբերում է հայկականին³⁸, ապա ցոյց տաւեցինք, որ այն

« Վեհերեկ, 1853, «Սոփիքը Հայկական», Ը. 1 էջ 9:

³⁵ Նայ տեղում, էջ 77:

³⁶ Աւետարան ըստ Մատթէոսի, Ժ. 3:

³⁷ Աւետարանայ, Քաւթ Արքաբուս, Դեբուսիս Նդեսիայի, Քաւթ Արքաբուս Թաղէոսի Հայոց, Երուսաղէմ, 1818:

Թարգմանուել է Վնդդայի վարդապետութեան մեզ չհասած ասորերակից: Խորհնացին իր ձեռքի տակ ունեցել է Եւսեբիոս Կեսարացու Եկեղեցական պատմույթիւնը, Աղդայի վարդապետութեան հայերէն Թարգմանութիւնը, և նաև հայկական աղբիւրներին՝ աւանդութիւններին ու մեզ յայտնի Թաղէոս առաքեալի վարքը, և նրա այդ բոլոր հետեւողութեամբ նա համագրում է Թաղէոս առաքեալի Հայաստանում ծաւալած գործունէութեան պատկերը ու նահատակութեան պատմութիւնը³⁹, Կարէորը մեզ համար այստեղ այն է, որ Ե. դարի մեր պատմահայրը բազում իր վկայութիւններով հաստատում է, որ Թաղէոս առաքեալը եղել է Հայաստանում ու քարոզելուց յետոյ էլ նահատակուել է: Մովսէս Խորենացուց բացի, Թաղէոս առաքեալի Հայաստանում քարոզած լինելու մասին վկայութիւններ է տալիս նաև Ե. դարի մեր միև պատմիչ՝ Փաւստոս Բիւզանդը: Նա իր Պատմութիւն Հայոցը սկսում է հետեւեալ ասողերով: «Ի քարոզութեանէն Թաղէոսի Առաքելոյ և նորուն յիւրից և ի մարտիրոսութեանէն մինչև ի կատարումն վարդապետութեանն Գրիգորի և իւրոյ հանգրտեանն, և յառաքելասպան Սանատրիկոյ արքային մինչև յակամայ Կնդուղդեւն հաւատոցն, և ի նորուն հանգրտեան արքային Տրդատայ զանցեալ իրացն զառաջնոցն զվարսն լուսացն, և որ ի ձեռն այլոցն գրեցան»⁴⁰, Նոյն մեր այս պատմիչը իր աշխատութեան մէջ խօսելով Գրիգոր Լուսաւորչի թու՝ Յուսիկի կաթողիկոսական ձեռնադրութեան մասին Վերել է. «Եւ նոսուցին զնա յաթոռն առաքելոյն Թաղէոսի, և յաթոռ իւրոյ հաւառն միմին Գրիգորի»⁴¹, Նոյն հայրապետը մասին մի այլ տեղում ասում է. «Եւսեբիոս Թաղէոսի առաքելոյն և զնորին նմանոյն Գրիգորի»⁴², Եւ ի վերջոյ Միմն Ներսէսի մասին յայտնում է նաև հետեւեալը:

«Վրան այսորիկ յիրաւի արժանի եղև ոս աթոռոյն Հայրապետաց և տեղոյ հարցն իւրոց առաջնոց, զաթոռն Թաղէոսի առաքելոյ, և ժողովութիւն հորն մարմնապէս ի նոյն հոգեւորին Գրիգորի»⁴³,

Երբ ուշադիր նայում ենք Փաւստոսի Թաղէոս առաքեալի մասին, հազորգած վկայութիւններին, դրանց սկսւնքը միայն հայկական աւանդութիւնն է, մինչև զհոգ Խորենացին տեղեակ լինելով հանգրձ ասորական աղբիւրներին ու Եւսեբիոս Կեսարացու գրքին, նա այդ բոլորը ներկայացրել է հայկական աւանդութեան լայն ներքոյ:

Արեղեանը իր «Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն» աշխատութեան մէջ ի հակադրութիւն Մալխասեանցի, որն Վերգորի գրոյցը, Սանդուխտ կոչոյի ու Թաղէոս առաքեալի վկայարանութեան հետ միասին կապում է Ե. դարում հայերի ասորական կողմնորոշման՝ ուղղում յունասէրներին դէմ, մասնացոյց է աւելում, որ Մովսէս Խորենացին, յունական և ոչ ասորական կողմնորոշման տէր մի մարդ, Հայոց Հայրապետական Աթոռն անուանում է ՎԱթոռ Սրբոյ Առաքելոյն Թաղէոսի: և այդ աւանդութիւնները (վկայարանութիւններ ըզվանդականութիւնը) մեծ սիրով զրի առնում իր գրքում⁴⁴: Արեղեանը գտնում է, որ այդ վկայարանութիւններին նպատակը եղել է Հայ Եկեղեցու ծագումը կապել առաքելականութեան հետ⁴⁵, Եւ եթէ Վնդդայի վարդապետութիւնը Ասորական Եկեղեցու առաքելականութիւնն է հաստատում, ապա Թաղէոս առաքեալի գործունէութեան հետ կապուած հայկական բուն աւանդութիւնը նոյն նպատակն է հետապնդում, միայն այն ասորերութեամբ, որ այստեղ նայն կապուած է Հայոց Եկեղեցու առաքելականութեան հետ⁴⁶,

Մալխասեանցը հակադրուելով Արեղեանին գրում է, թէ այդ ինչ բան հայկական աւանդութիւնն է⁴⁷, որ յայտնի է

³⁹ Մովսէսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Գիրք Բ, գլ. 12, էջ 161:

⁴⁰ Փաւստոս Բիւզանդացու Պատմութիւն Հայոց, Վնդդակ, 1614, գլուխ Գ, գլ. Ա, էջ 17:

⁴¹ Նոյն տեղում, գլուխ Գ, գլ. Ժ, էջ 47:

⁴² Նոյն տեղում, գլուխ Գ, գլ. ԺԲ, էջ 61:

⁴³ Նոյն տեղում, գլուխ Գ, էջ 98:

⁴⁴ Մ. Արեղեան, Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն, Հատոր Ա, Երևան, 1944, էջ 841:

⁴⁵ Նոյն տեղում:

⁴⁶ Նոյն տեղում, էջ 347:

⁴⁷ Մ. Մալխասեանց, Մատենադարանական Գրադարանութիւններ, Երևան, 1961, էջ 168:

եղել ոչ մի հեղինակի, մինչև Ազաթան-
զեղոսի գրութեան ժամանակը, կորինս
եղնիկ, եղնիկ չգրեան այդպիսի բան:
Ազաթանզեղոսն էլ չգրեմ, թէպէս նա
պարտաւոր էր գրեանել, որովհետեւ Վար-
դապետութիւն Սրբոյն Գրիգորին մասում,
որ գրեթէ գրեթէ կէսն է կազմում, պատ-
մբուում է Գրիգոր Լուսաւորչի կողմից,
թէ Գրիգորի համարձեցումը յետոյ նրա
այակերտները ցրուեցին զանազան եր-
կրիներ քարոզելու և մի առ մի թլուր-
կում է: Թէ տասներեկու առաքելականներն
ու եօթանասուն աշակերտներն ինչ աշ-
խարհներ զնացին քարոզելու (յօդուած-
ներ 686 և 689), բայց այստեղ ոչ Հայաս-
տան անունը կայ երկրներին շարքում, և
աչ Թաղէոսի անունը կարող էր բուն
հայկական առանգութիւն զոչութիւն ու-
նենալ՝ եթէ Ազաթանզեղոսը և Գրիգոր
Լուսաւորչին անգամ չգրեան յայդ: Սե-
ր ասելի դարձանային է, այդ բուն հայ-
կական առանգութիւնը Թարգմանաւած է:
Այս փաստարկունները յետոյ նա եղաւ
կանում է, որ Քաղէոս առաքելութիւն
վկայաբանութիւնը բուն հայկական առան-
գութիւնն չէ կորուց լինել, քանի որ նա
Թարգմանաւած է ուրիշ լեզուից, հաւա-
նորէն տարբերէնից, ինչպէս և Լուսաւո-
րչայի պատմութիւնը⁴⁶:

Այսպիսով, Մովսեսանը պնդում է,
որ Քաղէոս առաքելութիւնը վկայաբանութիւնը
ցօրինուել է ասորիներին կամ ասորական
կողմնորոշման համակիր մարդկանց կող-
մից, ի հակադրութիւն Հայաստանում
յուստասէրներին ազգեցնութեան:

Մովսեսանի այս տեղը ոգևորել
են Հայր Կողեանին և նա անհուն բաւա-
կանութեամբ և իրեն համար շատ հաճելի
վստահութեամբ նախ գրում է. «Երանաք
հաստատել իբր սօսյի եւ անհեթեհի եղելու-
թիւն, թէ Թաղէոսի առաքելութիւնն ու
վկայութիւնը ի Հայոց ոչ ոք գիտէ օտար-
ներէն, ոչ Եւսեբիոս, ոչ միևն ասորական
աղբիւրները (Հայցունի, 13, 24), և ոչ ոք
յոյներէն և լատիններէն մինչև Ջ. Գար
(Տուռնըրիզ, Էսթլա, 1912, 68)»⁴⁷, եւ
այս վճռական միտքը արտայայտելուց

յետոյ, վստահ իր տառնին, աւելացնում.
«Գոյութիւնն չունի նաև հայ հնազոյն հե-
ղինակներու մօտ: Ամենէն առաջ լուսաւոր-
ւորաւունք ունի, ինչպէս ինքն է տաւալ,
հայադաւան Մալխասեանցը» (ըստ երեւ-
ոյթի իրեն էլ պէտք է որակել «կաթա-
լիկադաւան» Ազաթանզեղոսն⁴⁸). Այնու-
հետեւ շարադրում է մեզ յայտնի վերո-
յիշեալ եղբայրացութիւնը, և այդ մօքին
հետեւելով, ինքը ևս կրկնում է ու մէջ-
բերում այն որ Քաղէոս առաքելութիւն
յաստատումը քարոզելը և այստեղ նուա-
տակուելը շինծու են, և կարիք չկայ ա-
պացուցելու: Սա Հայաստանի ասորաւոր
հոգևորականութեան ստեղծած կեղծիքն է՝
յուստասէր հոգևորականութեան ստեղծած
Ազաթանզեղոսի ու Լուսաւորչի հակակշիռ՝
Յունաստանում քարոզել Գրիգորի նշանա-
կութիւնը նստեցնելու համար⁴⁹:

Ս. Կողեանի նման վճռական յայտա-
բարութիւններից յետոյ, նրա համար ան-
հրաժեշտ էր ելք գտնել ու փաստեր, որ
Փառաստա Յիւզանդն ու Մովսէս խորհու-
ցին մեր հնազոյն պատմիչների շարքում
չէին գտնուում: Միթէ՞ նրանց հաղորդած
վկայութիւնները ոչ մի կշիռ չէին ներ-
կայացնում, ինչպէս մեր, այնպէս էլ
օտար մասնագէտներին համար: Զարժա-
նալի հետաւորութեամբ գտնում է հարցի լու-
ծումը և սերախոցած եղբայրացում է,
որ մեր այդ պատմիչների բնագրերը ա-
նազարմ ձևով չեն հասած մեզ և յետա-
դայ չեն եղբերը՝ այդ փոփոխութիւնները
կատարել են: Հասկանա՞ւոր է, որ Հայր
Կողեանն⁵⁰ ինչպիսի սխալ է թայտ ապրիւ
և այդպիսով իր պաշտպանած բոլոր գի-
րերը հարուածում, որովհետեւ եթէ հար-
ցերին այդ տեսանկիւնից մօտենանք,
ապա բոլոր հին հեղինակների գործերը
կարելի է կասկածի առկա առնել և հար-
ուածել, և եթէ այդպէս առաջ գնանք,

⁴⁶ Նայն տեղում:

⁴⁷ Նայն տեղում, էջ 31:

⁴⁸ Մենք միշտ Հայր Կողեանին ենք յիշա-
տակում, որովհետեւ Գրեգորայած Ամասունին
ու Մեթանը գիտակցութեւն լուսնեան են մատ-
նել Հայ Եկեղեցւոյ առաքելական և բնական
բազմա մինչ Գրիգոր Լուսաւորչի շրջանի Հայ
Եկեղեցւոյ պատմութիւնը, իբր թէ այն բոլոր
բովին գոյութիւն չի աւելցնել:

⁴⁹ Նայն տեղում:

⁵⁰ Ս. Կողեան, Հայոց Եկեղեցիք: էջ 30:

ապա ըստը կաթոլիկ էին հեղինակներին գործերը նման մաղից կարելի է անցկացնել, բայց մենք մեզ նման սոփեա տալիս մէջ գնել չենք ուզում, և ինչպէս միշտ, Հայ Եկեղեցու զաւակները, այնպէս էլ մենք յարգանքով ենք լցուած գէպի միւս Եկեղեցիներին ու ժողովուրդներին արաւթիւնները, Նոյնիակ Մաղաքիա Օրմանեան Սրբազանը, որի գէտ անբացատրելի զայրոյթով է լցուած Հայր Կոզեանը, և որը իր արտայայտութիւնների մէջ զուսպ է եղել և ոչ մի վերաբերական արտայայտութիւն թոյլ չի տուել կաթոլիկ Եկեղեցու հասցէին: Այժմ տեսնենք թէ ի՞նչ է գրուած նա այդ կապակցութեանը: Ճիշտ է՝ Բիւզանդիական համարում էր նեցուկ նախնական աւանդութեան մը վարկածին: Ան կը յիշէ քարոզութիւնը և նահատակութիւնը Փաղեսոսի ի ձեռն առաքելասպան Սանատրիոյ: Հայ Հայրապետական Աթոռը կ'որակէ Փաղեսական, Աթոռ Առաքելոյն Փաղեսոսի, ու Սուրբ Ներսէսին համար կ'ընէ: ԶՊաղեսական տարոն միանգամ ելիցէ՞: Ե. դարի մեր պատմիչի այս բացայայտ վկայութիւնները նրա կողմից կասկածի առից է առնուած և չթերեալ բառով են որակուած, և իրեն համար Մալխասեանի սխալմանը կուսնեքը աւելի մեծ արժէք են ներկայացնում քան թէ մեր պատմիչի տեղեկութիւնները, որովհետեւ թաղիչին դատողութիւնները իր օրրին ժամ են, և դրա համար այդ ողով շարունակուած է: Այս վէճը կ'արդարեանայ անով, որ բունց նայասէր Բիւզանդի համար (Մալխասեանց, Բիւզանդ, 66-68) խորթ աստորախիռութիւն բուրոյ այն խօսքերը իրեն չեն պատկանիր ու կրնան հանուիլ քառանգ ընդհանրութեան այնպէս ինչպէս ներմուծուած են օտար ասորաւորներ ձեռքէ մը (Մարկուարտ, Հանդ. Ամս., 1906, 40. Տուրքերի, 1911, 812) և Այնուհետեւ Քաղեսոս առաքելի վերաբերեալ իր այս դատողութիւնները աւարտուած է հետեւեալ խօսքերով թէ՛ Անյապիտի աւանդութիւն մը, սկսած կազմուից Ե. դարու վերջերը, ինչ թարգմանութեան: Վկայարանութիւն

Քաղեսոսի Առաքելոյն քարոզութեան և գալտեան ի Հայոս Այնուհետեւ է որ Քաղեսոս ներմուծուեցաւ Բիւզանդի մէջ՝ 66,

Իսկ ինչ վերաբերում է Մովսէս Խաչեմցուն, ապա Հայր Կոզեանը նրան նախ համարում է Ը. դարի պատմիչ և աւելին ըստ նրան այդ հանգամանքը բաւական է, որ նրա Քաղեսոս, Բարթողի մէջն առաքելների մասին տեղեկութիւնները կարգեն իրենց արժէքը: Այստեղ ևս նա գործի է գնում մեզ յայտնի իր այն գէնքը, որ դրանք յետագայում են ներմուծուած: Այն թէ ինչ է գրուած նա այդ մասին. Վիւնչ է Մովսէս Խաչեմցիի գիրքը այս հարցին մէջ: Եթէ հետեւինք ըստնուէրներու և զետեղենք գիրքը Ե. դարի դարերուն մէջ, պարզ է որ անոր խօսքը կը պատկանի նորայայտ աւանդութեան, իսկ եթէ հետեւինք ուրիշ սակաւութիւն ըստնուէրներու և պահենք գիրքը Ե. դարի մէջ, մեր Ե. դարու հեղինակներուն բացարձակ լուծութեան ծանրակշիռ ճշմունքին տակ՝ պէտք է որ Բարթողի մէջնի հայոց վերակարող խօսքը Հացունիի հետ համարենք յետմուտ, քանի որ մեր ձեռքը հասած Խաչեմցիի սկզբնադիր չէ, այլ խմբագրութիւն աւելի ուշ ժամանակից:

Պատմական փաստերը նախօրոք ունեցած գաղափարներին կամ մասնաւորութիւններին յարմարեցնելը և դերձակի մկրտումով կտրուելը և ըստ ցանկութեան կասկածի ենթարկելը այն ազդին չէ որով գրուած են պատմական երկերը:

(Շար.՝ 3)

ՀԱՅԿ ՄԵԼԻՔՆԵԱՆ



«Նայն տեղում, էջ 24»

«Նայն տեղում, էջ 24-25»